

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

Գլխավէնս, Օհայօ

28 Մարտ, 1978

Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, Առաջնորդ,  
Առաջնորդարան Հայոց Ամերիկայի եւ Գանատայի,  
Որ ի նիւ Եորկ, Ն.Ե.,

Գերաշնորհ Սրբազան,

Ընթացիկ տարւոյս եւ ամսոյս 9 թուակրով եւ 25667 թուահամար ձեր նա-  
մակը ստացուած է իր ժամանակին որ կը շօշափէ մեր Տարեկան Ծխական Ժողո-  
վին մէջ կայացած Ծխական Խորհուրդի մասնակի ընտրութեան օրինաւորութեան  
հարցը: Կը ներէք պատասխանի տարապայման ուշացման համար, նամակին գա-  
լուստը հանդիպած ըլլալուն մեր ամենէն զբաղեալ օրերուն, տօնական բացա-  
ռիկ օրերու եւ Քրիստոսի Տնօրինական Յիշատակութեանց կապակցութեամբ:  
Կապաւինիմ ձեր ներողամտութեան:

Ձեր նամակին տուած տուող զրգապատճառը կը թուի ըլլալ մեր Անդամական  
Ժողովի Ատենագրութեան մէջ յիշատակուած պարագայ մը՝ ըստ որում իբրեւ թէ  
անդամի մը կողմէ դիտողութիւն եղած ըլլայ ընտրութեան օրինաւորութեան  
նկատմամբ, մեր Թեմական Կանոնագրութեան 7-րդ յօդուածին տրամադրութիւնը  
Ժողովին կողմէ առ ոչինչս համարուած ըլլալուն ամբաստանութեամբ: Դուք  
ձեր կարգին, նախ քան որ վաւերացնէիք կատարուած ընտրութիւնը ուզած էք  
ապահովուել որ ընտրութիւնը կատարուած է օրինաւորապէս, եւ որպէս զի  
ճշդէք այս պարագան անձնապէս, ուզած էք որ ձեզի զրկուին խնդրոյ առար-  
կայ թեկնածուներուն անունները (որոնց ընտրութեամբ կը կարծուի որ վե-  
րոյիշեալ օրէնքը խախտած ըլլայ), ինչպէս նաեւ անոնց վճարած անդամատուր-  
քին ստացականին թիւն ու վճարման ճիշդ թուականը, որ ստորագրուած ըլլայ  
եկեղեցւոյս գանձապահին կողմէ:

Նախ պարտիք յիշել որ Ծխական Խորհուրդի վրայ նորընտիր անդամոց մաս-  
նակի թիւը 3 (երեք) է եւ ոչ թէ 5 (հինգ), քանի որ համաձայն անցեալ տար-  
-ուայ Ծխական Ժողովի որոշման, Ծխական Խորհուրդի անձնակազմի թիւը 11-էն  
(տասնեւմէկ) իջեցուած է 9-ի (ինը), եւ ուրեմն դադարեալ 5-ի (հինգ) փո-  
խարէն 3 (երեք) նորեր ընտրուած են որոնք միանալով մնացեալ 6-ին (վեց),  
պիտի կազմեն Ծխական Խորհուրդի 9 (ինը) հոգինոց նոր անձնակազմը, յետ  
Առաջնորդական վաւերացման:

Ծխական Խորհուրդի նորընտիր անդամներն են՝ քուէներու բացարձակ մեծա-  
մասնութեամբ՝ Պարոնայք Սեմ (Սուրէն) Միրաքեան, Տէյվիտ Անտոնեան եւ Գրի-  
գոր Ղազարեան: Ասոնցմէ Սեմ Միրաքեանի պարագային հասկնալի է որ հարց  
չի կրնար ծագիլ քանի որ ենթական եկեղեցական համայնքիս երկարամեայ ան-  
դամներէն է եւ անցեալին ալ ծառայած է Ծխական Խորհուրդի մարմնոյն վրայ  
եւ պատասխանատու պաշտօններ վարած: Ուրեմն խնդրոյ առարկայ կը դառնան  
միւս երկուքը՝ Պարոնայք Տէյվիտ Անտոնեան եւ Գրիգոր Ղազարեան որոնց ան-  
դամակցութիւնը եկեղեցւոյս՝ աւելի նոր է:

ի գոհացում ձեր պահանջած վաւերագրին հաճեցէք ներկակ գտնել մեր Մխական խորհուրդի Գանձապահին բացատրողագիրը, ուրկէ կը պարզուի որ՝

ա.)- Մեր ծուխին մէջ ստացագիր տալու դրուժիւնը չի կիրարկուիր .

բ.)- Անդամավճարներու գանձումը կը կատարուի ամբողջ տարուայ ընթացքին :

գ.)- Խնդրոյ առարկայ երկու թեկնածուները եկեղեցւոյս անդամակցելու իրենց մտադրուժիւնը յայտնած են մեզ 1977-ի տարեսկիզբէն ի վեր :

Ուրեմն այս բացատրութեանց հիման վրայ անոնք որոնք իրենց մտադրուժիւնը կը յայտնեն եկեղեցւոյ անդամակցութեան համար, նովին իսկ բանիւ անոնք նորագիր անդամներ կը նկատուին եկեղեցւոյս նոյն այդ տարուայ ընթացքին եւ իրենց անդամատրքը կ'ընդունուի որեւէ ատեն, նոյն տարուայ ընթացքին մինչեւ տարեվերջ : Վերոյիշեալները անգամ մը իրենց մտադրութիւնը յայտնելէ վերջ եկեղեցւոյ անդամակցութեան, այլեւս պատճառ մը չեն տեսած իրենց անդամատրքերու վճարումները շտապեցնելու քանի որ ծանօթ է իրենց այն պարագան որ իրենց վճարումներ ընդունելի են որեւէ ատեն մինչեւ տարեվերջ :

Այս բացատրութիւններէն վերջ փութանք ճշդել նաեւ որ մեր Յարեկան ժողովին մէջ թէեւ հարց յարուցուած է մեր թեմական Կանոնադրութեան 7-րդ յօդուածի կիրարկման կերպին նկատմամբ, ներկայացուած թեկնածուներուն առնչաբար, բայց եւ այնպէս այդ գիտողութիւնը բողոքի դիտումով չէ եղած երբէք, այլ աւելի լուսաբանութեան համար, որպէս զի յետագային շմեղադրութիւնք յիշեալ յօդուածը բողոքովին անտեսած կամ անգիտացած ըլլալու յանցանքով, եւ միւս կողմէ ալ ժողովականները գիտակցօրէն քուէարկած ըլլալին : Եւ անշուշտ պարզ է թէ յետ Առաջնորդական վաւերացման ընտրութիւնը կ'ըստ տանայ օրինաւոր հանգամանք :

Աւելցնենք նաեւ ուրիշ կարեւոր պարագայ մը՝ ըստ որում յիշեալ անձերը (որոնց ընտրութիւնը խնդրոյ առարկայ կը դառնայ մեր Կանոնադրութեան 7-րդ յօդուածին լոյսին տակ), հաւանած են որ իրենց անունները բերուին յատենի ժողովին իբրեւ ծխական խորհուրդի թեկնածու, ինքնակամօրէն, պարզապէս օգտակար ըլլալու գիտաւորութեամբ, երբ տեսած են որ ընտրողական Յանձնախումբը չէ կարողացած մէկ հատիկ թեկնածուի իսկ անուն ներկայացնել ժողովին : Եւ յետոյ ասոնք անծանօթ անձեր չեն եւ կը վայելեն համայնքիս մէջ յարգու պատիւ :

Պիտի խնդրէինք ուրեմն ձեր Սրբազնութեանն որ սոյն տուեալ բացատրութեանց լոյսին տակ, ծուխիս մէջ տիրող բացառիկ պարագաները նկատի առնէիք եւ ըստ այնմ արդար որոշման մը յանգէիք եւ շնորհէիք նորընտիր անձերուն վաւերացումը ի շահ եւ ի բարիք եկեղեցւոյս եւ ծխական համայնքիս :

Մեր ծխական խորհուրդը անձկալից է որ յիշեալ երեք անձերու միատեղ վաւերացումը փութով դրկէք, Ապրիլ 16-էն առաջ, որպէս զի այդ թուականին նոր

ST. GREGORY OF NAREK ARMENIAN CHURCH

666 Richmond Road  
Cleveland, Ohio  
44143. U.S.A.

Area Code 216—Tel. 381-6590

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ  
Գլխավէնտ, Օհայօ

(Շարունակութիւն)

Միական Խորհուրդին՝ ընծայումը կատարենք եւ այնուհետեւ անոնք անցնին պաշտօնապէս իրենց աշխատանքին, իբրեւ նոր շրջանի պատասխանատու Միական Խորհուրդ:

Մենք եւս մեր կարգին պիտի խնդրէինք որ վերոյիշեալ պարզուած պարագաները նկատի առնելով շնորհէիք փոփոխ մեր նորընտիր Միական Խորհուրդի վաւերացումը:

Շնորհակալութիւն ձեր հոգածու վերաբերմունքին եւ ուշադրութեան համար:

Մնամք որդիական ակնածանօք  
Խոնարհ Աղօթակից,



S. Տիրան ԲՆՆ. Փափագեան,

Հովիւ եւ նախագահ

Տարեկան Ընդհանուր Անդամական Ժողովի